

## Հայոց Նոր Տարին

Շուտով կը դիմաւորենք նոր տարի մը: Այս առթիւ մենք սորվեցանք հայ գաւառներու մէջ կատարուած նոր տարուան տօնախմբութիւններուն:

Հագարաւոր տարիներ առաջ, մեր պապերը Նոր Տարին կը տօնէին Արածանի գետին եզերքը, ուր ներկայ կը գտնուէին հայոց թագաւորները, իշխանները, հոգեւորական դասն ու ժողովուրդը: Արածանի գետին եզերքը տեղի կ'ունենային մարզական եւ այլ տեսակի խաղեր: Նոր Տարուան այս շքեղ հանդիսութիւնները տեղի կ'ունենային հայոց Նաւասարդ ամսուան սկիզբը ու կը կոչուէին Նաւասարդեան խաղեր: 1084 թուականին, Նոր Տարին սկսած ենք տօնել Յունուար 1-ին:

Նոր Տարին չենք կրնար պատկերացնել առանց տօնածառի եւ կաղանդ Պապայի: Այս երկուքը աշխարհի մարդկութեան կը բերեն ուրախ մթնոլորտ եւ հաճելի տրամադրութիւն:

Նոր Տարին ունեցած է գանազան հոմանիշներ. Ամանոր, Տարեմուտ, Տարեգլուխ, Նաւասարդ, Կաղանդ: Կաղանդի տօնախմբութիւններուն մէջ յայտնի են հետեւեալ երեւոյթներն ու ավանդութիւնները:

Դեկտեմբեր 31-ի գիշերը, փոքրիկները տունէ տուն պտըտելով եւ երգելով կը կատարէին "կաղնտեսը": Անոնք տանիքէ տանիք ելլելով, ծխնելոյզներէն կը կախէին պարապ գուլպայ, գդակ, կողով: Տանտիկիները անոնց մէջ կը լեցնէին չորցուած պտուղներ, գաթայ եւ կարկանդակ:

Կաղանդի սեղաններուն վրայ դրուած կ'ըլլային չամիչ, ընկոյզ, կաղին, նուշ, արմաւ, թուզ, շարոց, պաստեղ, խմորեղէն, պահքի յատուկ կերակուրներ, ինչպէս՝ անուշապուր, երբեմն ալ հերիսան:

Խմորեղէնի նշանաւոր տեսակներէն էր "տարին": Ան կլոր ու տափակ ցորենի հաց մըն էր. Տարին 12 մասերու կը բաժնէին ու անոր մէջ դրամ կը դնէին, որու բաժինին մէջ որ գտնուէր, տարուան "տերը" եւ ընտանիքին "բախտաւորը" կը նկատուէր:

Կաղանդի նախապաշարումները բազմաթիւ են:

Որոշ տեղեր, կաղանդի իրիկունը պատուհանին առջեւ սպասելով իրենց բախտը կը փորձէին: Եթէ մինչեւ ժամը 12 լապտերաւոր անձեր

տեսնեին, կը նշանակէր, որ յառաջիկայ տարին երջանիկ ու լուսաւոր օրեր պիտի ունենային:

Ընդհանուր մտայնութիւն մը կար, թէ Դեկտեմբեր 31-ի գիշերը բոլոր աղբիւրները ոսկի կը հոսէին: Երիտասարդները կ'երթային աղբիւր, որպէսզի լեցնեն իրենց ամանը: Բայց լու՛ն տուն կը վերադառնային:

Կաղանդին, ոչ միայն մարդիկ գիրար կը կաղընդէին, այլ տանտէրը՝ իր անասունները. Երիտասարդներ ու աղջիկներ՝ աղբիւրն ու գետը: Ջուրին մէջ գարի ու ցորեն կը նետէին ու կ'ըսէին .-

“Ա՛ն քեզի ցորեն,գարի, Տուր ինծի հազար բարի, Շնորհաւոր Նոր Տարի”:

Նոր տարին մուտք կը գործէ մարդոց տունները ժամը 12-ին՝ աղմուկով բացուող պատուհաններէն ու դռներէն: Ճիշդ այդ պահուն է, որ Նոր Տարին իր բոլոր բարիքներով պիտի թափանցէ ձեր եւ մեր տունները:

Թէ աշխարհում փակ դռներ կան,

Թող որ բացուեն այս գիշեր,

Ու Նոր Տարին նոր խնդութեամբ

Թող ներս մտնի այս գիշեր:

Թէ աշխարհում կան պանդուխտներ,

Թող տուն դառնան այս գիշեր,

Հայրենական յաւերժութեամբ

Ողջագուրուեն այս գիշեր:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ Բոլորիդ: